

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում և առցանց

- ✓ 2020թ. նոյեմբերի 2-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված տեսակոնֆերանսի միջոցով կայացած «ԵԱՏՄ անդամ պետությունների համար կառուցվածքային բյուջետային հաշվեկշռի ցուցանիշների հաշվարկի մեթոդաբանության մշակումը և դրա գնահատումը» խորագրով գիտահետազոտական աշխատանքի երրորդ՝ վերջնական փուլի արդյունքների պաշտպանությանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 2-3-ը Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է Միացյալ ազգերի համալսարանի կողմից կազմակերպված Օրենսդրության, վիճակագրության և էլեկտրոնային թափոնների կառավարման վերաբերյալ վեբինարին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 3-ին և 5-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Վիճակագրական օրենսդրության արդիականացման փորձագիտական առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 6-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ԵԱՏՀ Խորհրդատվական կոմիտեի մակրոտնտեսական քաղաքականության գծով ենթակոմիտեի հերթական նիստի տեսակոնֆերանսին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 9-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված Հարավային Կովկասի աղքատության, արդարության և գենդերային ծրագրի շրջանակում Բարեկեցության չափման վերաբերյալ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցության հիմնական արդյունքների, ներառյալ Հայաստանի համար աղքատության նորացված գծերի և աղքատության մակարդակի վերաբերյալ առցանց քննարկմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 9-10-ը Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված Շրջակա միջավայրի տնտեսական հաշվապահական հաշվառման համակարգի փորձարարական էկոհամակարգի հաշվապահական հաշվառման 2020թ-ի փորձագիտական առցանց ֆորումին,

- ✓ 2020թ. նոյեմբերի 10-13-ը Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Հ. Հակոբյանը և Հ. Հովհաննիսյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը և նույն բաժնի մասնագետ Ս. Կարապետյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Էներգիայի վերջնական սպառման վիճակագրության արտադրություն» խորագրով առցանց տարածաշրջանային աշխատաժողովին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 10-30-ը Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ներածություն շրջակա միջավայրի տնտեսական հաշվապահական հաշվառման համակարգի հիմնական շրջանակներ» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 11-ին ՀՀ ՎՊես անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով կայացած հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 11-ին, 17-ին և 24-ին Արմատատի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Ն. Եղիզարյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համար բյուջեի կառուցվածքային հաշվեկշռի ցուցանիշի հաշվարկման և դրա գնահատման մեթադաբանության մշակում» խորագրով ուսուցողական առցանց սեմինարին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 12-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Մակրոտնտեսական քաղաքականության գծով Խորհրդատվական կոմիտեի առցանց 15-րդ նիստի տեսակոնֆերանսին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 16-19-ը և 24-27-ը Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Աստվածատուրովան, Ս. Խաչատրյանը, Մ. Խաչատրյանը և Ս. Մովսիսյանը, մասնագետներ Ն. Բաբոյանը և Ա. Տոնապետյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած ««Ռեսուրսներ-օգտագործում» և «Ծախսեր-թողարկում» աղյուսակների մշակում» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. նոյեմբերի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմստատի 32 աշխատակից մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Լավ որակի վիճակագրության արտադրության և տարածման բարելավում» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 17-19-ը Արմստատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից կազմակերպված Աշխատանքային միգրացիայի վիճակագրության գծով աշխատանքային խմբի 4-րդ առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 17-19-ը Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը և գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը մասնակցել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Տնտեսության չափումը համաճարակի ժամանակ» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 18-ին Արմստատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, նույն բաժնի մասնագետ Ա. Մարտիկյանը, գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Լ. Գրիգորյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Թոխաթյանը և սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Սիմոնյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Գենդերի վերաբերյալ տարածաշրջանային հրապարակում» խորագրով մեկնարկային առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 18-19-ը Արմստատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը մասնակցել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում» խորագրով առցանց աշխատաժողովին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 18-ին, 25-ին և դեկտեմբերի 2-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմստատի բնապահպանության վիճակագրության բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են Եվրոպական ազատ առևտրի սոցիալացիայի, ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից համատեղ կազմակերպված Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության վերաբերյալ տարածաշրջանային վեբինարներին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 19-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմստատի 19 աշխատակից (ԿՁՆ աշխատանքային խումբ) մասնակցել են Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված ԿՁՆ-ների հաշվետվողականության և մշտադիտարկման վերաբերյալ առցանց հանդիպմանը,

- ✓ 2020թ. նոյեմբերի 19-20-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի Ծերացման հարցերով մշտական աշխատանքային խմբի 13-րդ առցանց նիստին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 19-25-ին Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, նույն բաժնի մասնագետներ Լ. Ավետիսյանը և Ս. Կարապետյանը մասնակցել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված ԿՁՆ 2.1.1 ցուցանիշի վերաբերյալ առցանց աշխատաժողովին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 20-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված «Բնապահպանական հոսքեր և ԿՁՆ-ները» խորագրով փորձագիտական առցանց աշխատաժողովին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 23-ին Արմատատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի ավագ մասնագետ Ա. Շաբոյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կողմից կազմակերպված «Փոքր Մեծ տվյալներ. վարչական տվյալների կարողությունների բացահայտում» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 23-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված «21-րդ դարի կլիմայի փոփոխության, մատչելիության, էներգիայի և կայունության չափանիշներին համապատասխանող շենքեր և վերանորոգման լուծումներ» խորագրով վեբինարին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 23-24-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված Ջրի հետ կապված ԿՁՆ-ների իրականացման փորձի փոխանակման նպատակով կարողությունների զարգացման տարածաշրջանային առցանց սեմինարին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 23-24-ը Արմատատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը և նույն բաժնի մասնագետ Ս. Կարապետյանը մասնակցել են Եվրոպական միության ԹԱՅԵՔՍ գործիքի շրջանակում կայացած Եվրոպական մեթոդաբանության կիրառմամբ սննդամթերքի սպառման տվյալների հավաքագրման վերաբերյալ առցանց միջազգային սեմինարին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 23-25-ը և դեկտեմբերի 2-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, աշխատուժի

հետազոտության ծրագրի ծրագրավորող Ս. Արթեյանը, գյուղատնտեսության վիճակագրության բաժնի ավագ մասնագետներ Ռ. Վարդանյանը, Լ. Գրիգորյանը և Ա. Անտոնյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական ռեսուրսների կառավարման բաժնի ավագ մասնագետ Ս. Շախգելյանը, նույն վարչության ավագ մասնագետ Ն. Դավթյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի մասնագետներ Լ. Ավետիսյանը և Ս. Կարապետյանը և որակի կառավարման բաժնի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված Տվյալների փաստաթղթավորման նախաձեռնության (DDI) վերաբերյալ առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. նոյեմբերի 23-27-ը՝ նոյեմբերի 23-ին՝ Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ- Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, ՀՀ ՎԿ տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը, նոյեմբերի 24-ին՝ գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, նոյեմբերի 25-ին՝ վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նոյեմբերի 26-ին՝ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, նոյեմբերի 27-ին՝ Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ- Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Ն. Բաղդասարյանը, Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT ծրագրի համակարգող Տ. Գևորգյանը մասնակցել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի թիմի ղեկավար, ավագ տնտեսագետ Սահղա Իսմայիլխանովայի և խորհրդատու Լիլիա Սաետովայի հետ ECASAT ծրագրի շրջանակում կայացած առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 24-ին Արմատատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ասիայում և Խաղաղօվկիանոսի տարածաշրջանում տվյալների ինտեգրման իրականացում» խորագրով առցանց տարածաշրջանային աշխատաժողովին,

- ✓ 2020թ. նոյեմբերի 24-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ԿՁՆ-ի վիճակագրության Կառավարող խմբի վեբեքս հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 24-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) կողմից կազմակերպված EGRIS 1-ին ենթախմբի հերթական առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 24-26-ը Արմատատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի վարչության կողմից կազմակերպված «Արդյունավետ, ներառական և հաշվետու հանրային ինստիտուտներ և վերափոխում դեպի թվային կառավարում՝ կայուն վերականգման և Կայուն զարգացման նպատակների իրականացման համար» խորագրով 4-րդ տարածաշրջանային առցանց գիտաժողովին,
- ✓ 2020թ. նոյեմբերի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով հանդիպմանը,
- ✓ 2020թ. նոյեմբերի 27-ին Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարության և էներգիայի միջազգային գործակալության կողմից համատեղ կազմակերպված «Հայաստանի էներգետիկ տվյալների հավաքագրման և էներգետիկ բալանսի և Ջերմոցային գազերի գույքագրման գործընթացների փորձը» խորագրով վեբինարին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 1-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ – Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT ծրագրի համակարգող Ս. Գևորգյանը մասնակցել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASTAT դրամաշնորհային ծրագրի շրջանակում ԹՎԻՆԻՆԳի վերաբերյալ առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 1-3-ը Արմատատի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Կիրակոսյանը մասնակցել է Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կողմից կազմակերպված Հեռահաղորդակցության / ՏՀՏ ցուցանիշների համաշխարհային 17-րդ առցանց սիմպոզիումին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 1-ին և 3-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և աշխատուժի հետազոտության ծրագրի

ծրագրավորող Ս. Արթեյանը մասնակցել են STEP ծրագրի և ՄԱԿ Կանայք-ի կողմից կազմակերպված «Ժամանակի օգտագործման հետազոտություն» ծրագրի շրջանակում ՀՀ Վիճակագրական կոմիտեի անձնակազմի մասնագիտական կարողությունների կատարելագործմանը միտված հերթական առցանց սեմինարին,

- ✓ 2020թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ ՎՊԽ անդամր Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 2-4-ը Արմատատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Աղքատության և անհավասարության չափում» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 3-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի ավագ մասնագետ Ս. Մովսիսյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Եղիզարյանը և վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական միության կողմից կազմակերպված ԵԱՏՄ ինտեգրացիոն ներուժի ձևավորման և գնահատման համար «Ժախսեր-թողարկում» երկրների և միջերկրային աղյուսակների կիրառման գծով փորձագիտական խմբի 11-րդ նիստի տեսակոնֆերանսին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 7-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է Նիդերլանդների վիճակագրության կողմից կազմակերպված «ՀՆԱ-ից այն կողմ. բարեկեցություն և ԿԶՆ-ներ քաղաքականության մշակման գործընթացում» խորագրով առցանց կոնֆերանսին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 7-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է Եվրոպայի վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի կողմից կազմակերպված Թափոնների վիճակագրության շրջանակի հստակեցման նպատակով ձևավորված աշխատանքային խմբի հերթական առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի Կառավարող կոմիտեի 2-րդ առցանց նիստին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացում» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի Կազմկոմիտեի վեբեքս հանդիպմանը,

- ✓ 2020թ. դեկտեմբերի 8-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության միջոցով փախստական բնակչության ընդգրկումը» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ ՎՊԽ անդամր Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 9-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի փորձագետ Օսաուլենկոյի հետ Skype-ով կայացած ECASAT ծրագրի «Արմատատի անձնակազմի կառավարման արդյունավետության և ուսուցանման համար ուղեցույցների մշակում» խորագրով հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 10-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և աշխատուժի հետազոտության ծրագրի ծրագրավորող Ս. Արթեյանը մասնակցել են Եվրոպայի ուսուցման հիմնադրամի (ETF) կողմից կազմակերպված «Աշխատաշուկայի տեղեկատվությունը վերափոխման գործընթացում. կենտրոնացում մեծ տվյալների, ESSO հմտությունների և ԵՄ-ում շրջանավարտների հետևման վրա» խորագրով վեբինարին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել են ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «ԵՄ կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի ներքո կազմակերպված «Ինստիտուցիոնալ կարողությունների գնահատում» ուսումնասիրության արդյունքների ներկայացման առցանց միջոցառմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 14-18-ը Արմատատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը և նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Գրիգորյանը, Ա. Դաշյանը, Ա. Շաբոյանը և Մ. Պողոսյանը մասնակցել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի Բուլղարիայի ազգային վիճակագրական ինստիտուտի Բիզնես վիճակագրության վարչության տնօրեն Անաստաս Տրոյանսկիի հետ Skype-ով կայացած ECASAT ծրագրի «Բիզնես ռեգիստր» բաղադրիչի շրջանակում քննարկմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 15-ին Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է Էներգիայի

միջազգային գործակալության կողմից կազմակերպված EU4Energy ծրագրի I-ին փուլի փակման առցանց միջոցառմանը,

- ✓ 2020թ. դեկտեմբերի 18-ին Արմատատի որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ս. Հունանյանը և Ջ. Ավոյանը, աշխատուժի հետազոտության ծրագրի ծրագրավորող Ս. Արթեյանը մասնակցել են ՄԱԿ Կանայք-ի կողմից և «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Ժամանակի օգտագործման հետազոտություն» ծրագրի շրջանակում Արմատատի անձնակազմի մասնագիտական կարողությունների կատարելագործմանը միտված հերթական առցանց սեմինարին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 21-22-ը Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը և նույն բաժնի ավագ մասնագետներ Գ. Պետրոսյանը և Ջ. Ավետիսյանը մասնակցել են Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված Տնային տնտեսությունների կողմից ձեռքբերվող սպառողական ապրանքների և ծառայությունների ցանկը թարմացնելու վերաբերյալ առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 21-23-ը Արմատատի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ա. Բարոյսյանը, Ն. Եդիգարյանը և Ա. Օհանջանովը, մասնագետներ Լ. Ասլանյանը և Լ. Շահբազյանը մասնակցել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի ֆինանսների վիճակագրության փորձագետ Սեգիսմունդո Ֆասլերի հետ Skype-ով կայացած ECASAT ծրագրի «Ֆինանսական հաշիվ և հաշվեկշիռ» բաղադրիչի շրջանակում քննարկմանը,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 22-ին Արմատատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը և նույն բաժնի մասնագետ Վ. Սողբայանը մասնակցել են Անկախ պետությունների համագործակցության միջպետական վիճակագրական կոմիտեի կողմից կազմակերպված «ԱՊՀ երկրների երիտասարդությունը և ԿԶՆ-ն» ժողովածուի առցանց շնորհանդեսին,
- ✓ 2020թ. դեկտեմբերի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակ 6 թիրախներին հասնելու ռազմավարություն և 2021-2030 թվականների գործողությունների ծրագիր» փաստաթղթի նախագծային տարբերակի քննարկմանը,

- ✓ 2020թ. դեկտեմբերի 28-ին Արմստատի նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմստատի գլխավոր քարտուղար Ա. Հայրապետյանը, Արմստատի անձնակազմի կառավարման բաժնի պետ Գ. Հարությունյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը և «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT դրամաշնորհային ծրագրի համակարգող Ս. Գևորգյանը մասնակցել են «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT ծրագրի շրջանակում կազմակերպված «Երկխոսություն պաշտոնական վիճակագրություն արտադրողների և օգտագործողների միջև. պաշտոնական վիճակագրության հանրային արժեքն ու օգտակարությունը բարձրացնելու ուղիները» խորագրով առցանց սեմինարին: